- Եթե դուք քվեարկության օրը գտնվում եք արտասահմանում, հյուպատոսական հաշվառման մեջ կամ չեք գտնվում հյուպատոսական հաշվառման մեջ, ընտրություններից առաջ, ոչ ուշ, քան 21-րդ օրը գրանցվում եք տվյալ պետությունում ստեղծված տեղամասային ընտրական հանձնաժողովում կամ հյուպատոսական հաստատությունում (բացի տեղական ընտրություններից):

Վերևում նշված դեպքերում ձեր տվյալները մտցվում են հատուկ ցուցակ: Ընտրողների հատուկ ցուցակը կազմում և իր կարգադրությամբ հաստատում է տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկությունից առաջ, ոչ ուշ, քան 3-րդ օրը և անհապաղորեն փոխանցում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովին:

6. Ինչպիսի՞ գործողության պետք է դիմեմ, եթե հիվանդության պատճառով չկարողանամ ներկայանալ ընտրական տեղամաս:

Եթե ընտրողը հիվանդության պատճառով չի կարող ներկայանալ ընտրական տեղամաս, նա իրավունք ունի գրավոր կամ հեռախոսային դիմումով, քվեարկությունից 2 օր շուտ դիմել համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին՝ շարժական ընտրական արկղի միջոցով ձայն տալու խնդրանքով: Հանձնաժողովի քարտուղարը գրանցման մատյանում նշում է դիմումը / տեղեկատվությունը ստանալու ճշգրիտ ժամանակը / հեռախոսի համարը: Միաժամանակ ընտրողը պետք է իմանա, որ նշված դեպքում նա ունի միայն շարժական ընտրական արկղի միջոցով ձայն տալու իրավունք և ընտրական տեղամասում հայտնվելու դեպքում ընտրություններին այլևս չի կարողանա մասնակցել: Շարժական ընտրական արկղով ձայն տալու իրավունք կարող է ունենալ.

- Ընտրողը, որն առողջական վիճակի պատճառով չի կարող հասնել քվեարկության շենք:
- Ընտրողը, որը սահմանափակ հնարավորությունների պատճառով չի կարող քվեարկության շենք հասնել (միայն այն ընտրողը, որը չի կարող ինքնուրույն հասնել ընտրական տեղամաս):
- Ընտրողը, որը գտնվում է ընտրական տեղամասի տարածքում, բայց դժվար հասանելի վայրում:

Ընտրողի տվյալները լրացուցիչ ցուցակում մտցնելը (շարժական արկղի ցուցակ) հնարավոր է միայն այն դեպքում, եթե.

- Ընտրողը մտցված է նշված ընտրական տեղամասի միասնական ցուցակում կամ հատուկ ցուցակում և
- Ընտրողը փաստորեն գտնվում է այդ ընտրական տեղամասի սահմաններում:

Տարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ ցուցակի հավելվածում մտնում են հետևյալ կարգի ընտրողների մասին հատուկ ցուցակում գոյություն ունեցող տվյալները. ընտրողները, որոնք գտնվում են նախնական կալանքի մեջ և / կամ հիվանդանոցում, նաև ընտրողները, որոնք գտնվում են պետական սահմանին գտնվող ռազմական մասում: (Եթե նախնական կալանքի վայրը, հիվանդանոցը, սահմանային մասը գտնվում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի սահմաններում:)

7. Կարող եմ, թե՞ ոչ մասնակցել ընտրություններին որպես դիտորդ և ինչպիսի՞ գործողությունների պետք է դիմեմ դրա համար:

Ըստ Վրաստանի ընտրական օրենսգրքի՝ ընտրությունների դիտումը անցկացնում են տեղական և միջազգային դիտորդ կազմակերպությունները: Ընտրական սուբյեկտները (քաղաքական կուսակցությունները, թեկնածուները) ընտրական հանձնաժողովի հետ հարաբերությունները ներկայացնում են իրենց ներկայացուցիչների օգնությամբ: Ընտրական սուբյեկտի ներկայացուցիչները, օրենքով սահմանված դեպքերում, նաև օգտվում են դիտորդի իրավունքներից: Ընտրություններին ակտիվորեն հետևում և լուսաբանում է մեդիան, սակայն մեդիայի ներկայացուցիչներն ունեն միայն որոշակի իրավունքներ՝ ընտրական գործընթացների մեջ:

Եթե ցանկանում եք հետևել ընտրություններին՝ որպես տեղական դիտորդ, պետք է դառնաք կամավոր և / կամ անդամագրվեք տեղական դիտորդական կազմակերպությունում, որի օրինակարգը կամ կանոնադրությունը նկատի է առնում ընտրությունների մոնիտորինգը կամ մարդու իրավունքների պաշտպանությունը և որը ընտրությունները դիտելու նպատակով գրանցված է համապատասխան ընտրական հանձնաժողովում:

Դիտորդը կարող է հետևել ցանկացած ընտրական պրոցեդուրայի, ընտրական գործընթացի բոլոր փուլերում. նախընտրական ժամանակահատվածում, ընտրությունների օրը և ընտրություններին հաջորդող ժամանակահատվածում:

8. Ինչպե՞ս է համակարգվում ընտրական տարածքային հանձնաժողովը, և կարո՞ղ եմ արդյոք դառնալ նրա անդամ:

Տարածքային ընտրական հանձնաժողովը Վրաստանի ընտրական հանձնաժողովի ժամանակավոր տարածքային մարմին է, որն իր իրավասությունների սահմաններում, ընտրական տեղամասի տարածքում, ապահովում է ընտրությունների՝ օրենքով անցկացումը, ընտրական օրենսդրությամբ սահմանված քվեարկության գործողությունների անցկացումը, ընտրողների, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչների և դիտորդների իրավունքների պաշտպանումը:

Գործող օրենսդրությամբ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմված է 13 անդամներից: Տեղամասային ընտրական հանձնաժողովի 6 անդամներին մրցույթի հիման վրա ընտրում է տարածքային ընտրական հանձնաժողովը, իսկ 7 անդամները նշանակվում են ընտրական օրենսգրքի համապատասխան իրավասու կվալիֆիկացված կուսակցությունները: Այստեղից ելնելով, ընտրական հանձնաժողովի անդամ դառնալու համար, գոյություն ունի երկու ճանապարհ. մասնակցություն ունենալ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնի համար համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից հայտարարված մրցույթին, եթե դուք բավարարում եք տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնը զբաղեցնելու համար ընտրական օրենսգրքով սահմանված պահանջները: Կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամության համար նշանակվում եք համապատասխան կվալիֆիկացված ընտրական սուբյեկտի կամ կուսակցության կողմից: Միաժամանակ կարևոր է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը նրա նշանակած / ընտրած սուբյեկտի ներկայացուցիչը չի հանդիսանում: Նա իր գործունեության մեջ անկախ է և ենթարկվում է միայն Վրաստանի Սահմանադրությանը և օրենքին: Որևէ ներգործություն ընտրական հանձնաժողովի անդամի վրա կամ նրա գործունեության մեջ մասնակցությունը արգելված է և պատժվում է օրենքով:

ALPE

54, Chavchavadze Avenue, entr. 5
0179, Tbilisi, Georgia; Tel: +995 32 2220016
E-mail: office@alpe.ge
www.alpe.ge
www.facebook.com/presidentialelection20013.ALPE

ՀԱՃՈՂՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՅԱՑԱԾ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ALPE

MDF
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՀԱՄԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

«Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի, 18 տարեկան հասակից ունի հանրաքվեի, պետական և ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունք: Ապահովված է ընտրողների կամքի ազատ դրսևորումը:»

Վրաստանի Սահմանադրություն
Հոդված 28

Ընտրական իրավունք

Վրաստանում ընտրական իրավունքն ապահովված է Վրաստանի Սահմանադրությամբ, Վրաստանի ընտրական օրենսգրքով, միջազգային իրավունքի սկզբունքներով և նորմերով և ուրիշ օրենսդրական գործողություններով:

Ըստ ընտրական օրենսգրքի, ընտրությունները հանրային գործընթաց են, որի նշանակումը և արդյունքը, համընդհանուր ընտրություններով, իշխանության ներկայացուցչական մարմինների և հանրային իշխանության պաշտոնավար անձանց ընտրությունն է:

Վրաստանի նախագահի, Վրաստանի խորհրդարանի, սակրեբուլոների և Թբիլիսի քաղաքի քաղաքապետի ընտրություններին նախապատրաստվելու և անցկացնելու կանոնները և իրավական հիմքերը, ինչպես նաև՝ ընտրություններին մասնակից կողմերի իրավունքներն ու երաշխավորությունները սահմանում է Վրաստանի ընտրական օրենսգիրքը:

1. Ինչպես և որտեղ կարող եմ ստուգել, գրանցվա՞ծ եմ արդյոք ընտրողների ցուցակում:

Ոչ ընտրական ժամանակահատվածում, ցանկացած ժամանակ, ընտրողը, ընտրական գրանցում ունեցող կուսակցությունը/ընտրական բլոկը և դիտորդ կազմակերպությունը իրավունք ունեն ծանոթանալու ընտրողների ցուցակի հանրային տեղեկատվության համար նախատեսված տարբերակին Վրաստանի կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը ընտրողների միասնական ցուցակը տեղամասային ընտրական հանձնաժողովից ստանում է, ոչ ուշ, քան առաջին գումարման օրը և անմիջապես փակցնում է հանրային տեղեկատվության համար նախատեսված տարբերակը տարածքային ընտրական հանձնաժողովի շենքում, երևացող տեղում: Ընտրողն իրավունք ունի խնդրել միայն իր և իր ընտանիքի անդամների մասին գոյություն ունեցող բոլոր տվյալներին ծանոթանալ և նրանցում փոփոխություններ մտցնել:

2. Ի՞նչ գործողությունների պետք է դիմեմ, եթե իմ տվյալները չգտնեմ ընտրողների ցուցակում:

Ցուցակում անճշտությունների հայտնաբերման դեպքում դուք պետք է դիմեք համապատասխան հանձնաժողովի, ոչ ընտրական ժամանակահատվածում ցանկացած ժամանակ, կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին, իսկ ընտրական ժամանակահատվածում նաև՝ տեղամասային ընտրական հանձնաժողովին, մինչև ընտրությունները, ոչ ուշ, քան 16-րդ օրը: Ցուցակում ուղղումներ մտցնելու խնդրանքով պետք է ներկայացնել անձը հաստատող վկայական և լրացնել հատուկ ձև: Ընտրական տեղամասում փակցրած ցուցակի հանրային տարբերակներում հայտանաբերված անճշտության կամ ձեր տվյալների՝ ցուցակում գոյություն չունենալու դեպքում, ձեր դիմումները անհապաղորեն, մինչև ընտրությունները ոչ ուշ, քան 16-րդ օրը, տեղամասային ընտրական հանձնաժողովը պետք է փոխանցի տարածքային ընտրական հանձնաժողովին, որը կքննարկի ստացած դիմումները և որոշում կընդունի 2 օրված ընթացքում: Տարածքային ընտրական հանձնաժողովի կարգադրությունը ընտրողների տվյալներում / ցուցակներում փոփոխություններ մտցնելու մերժման մասին, տարածքային ընտրական հանձնաժողովի որոշում ընդունելու հաջորդ օրվանից, որոշման մասին պետք է հայտնի դիմողին: Դուք կարող եք մերժման մասին որոշումը բողոքարկել համապատասխան տեղամասային / տարածքային դատարանում:

Ընտրողների ցուցակում սեփական տվյալների ստուգումը դուք նաև կարող եք կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում, որտեղ այլ կարևոր տեղեկատվության հետ տեղակայված է ընտրողների ցուցակներում տվյալներն ուղղելու հատուկ ծրագիր: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջի հասցեն է. www.cec.gov.ge:

3. Համապատասխան ինչպիսի՞ փաստաթուղթ կարող եմ ներկայացնել ընտրողների ցուցակում հայտնվելու համար:

Ընտրողների միասնական ցուցակում մտցվում են ընտրական տարիքի (Վրաստանում ընտրական տարիքը սկսվում է 18 տարեկանից) և ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացու օրենսդրությամբ սահմանված տվյալները: Ընտրողների միասնական ցուցակը կազմվում է տարբեր պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, տարեկան չորս անգամ, Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացված տեղեկատվության հիման վրա:

Այն դեպքում, եթե ձեր տվյալները ցուցակում չկան կամ եթե ընտրողների ցուցակում անճշտություն հայտաբերեք, պետք է դիմեք համապատասխան ընտրական հանձնաժողովի և ներկայացնեք Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայական, իսկ բռնի տեղահանված անձի դեպքում՝ փախստականի վկայական: Բացառիկ դեպքերում, անհրաժեշտ է լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնել, օրինակ՝ անձնագրում գոյություն ունեցող գրանցում սահմանը հատելու մասին, տեղեկանք՝ ստացիոնար բուժական հաստատությունից, պատժիչ հաստատությունից ազատվելու մասին տեղեկանք:

4. Ինչպիսի՞ գործողության պետք է դիմեմ, եթե ընտրությունների օրը պարզվի, որ ընտրողների ցուցակում իմ տվյալները չկան:

Վրաստանում գոյություն ունեն երեք ցուցակներ. ընտրողների միասնական ցուցակ, ընտրողների հատուկ ցուցակ և ընտրողների ցուցակի հավելված (այսպես կոչված՝ շարժական արկղի ցուցակ): Վրաստանի ընտրական օրենսդրությունը ընտրությունների օրը որևէ տեսակի լրացուցիչ ցուցակի գոյությունը նկատի չի առնում: Այն դեպքում, եթե ընտրողը չի դիմում օրենքով սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան ընտրական հանձնաժողովին, ընտրողների ցուցակում իր տվյալներն ավելացնելու կամ նրանցում ուղղումներ մտցնելու խնդրանքով, սահմանափակվում է նրա՝ ձայն տալու իրավունքը, բացի ստորև թվարկված դեպքերից: Այդ դեպքերն են.

Ընտրություններից առաջ 16 օրվա ընթացքում, այս թվում նաև ընտրությունների օրը, ընտրողին կարելի է ավելացնել ընտրողներ հատուկ ցուցակում միայն երեք բացառությունների դեպքում: Այդ դեպքերն են.

- Եթե ընտրողը եկել է արտասահմանից և օրենքով սահմանված ժամկետում (ընտրություններից օրվանից առաջ, ոչ ուշ, քան 16-րդ օրը) չի կարողացել ընտրողների միասնական ցուցակում ստուգել սեփական տվյալների ճշտությունը: Այսպիսի դեպքում ընտրողը պետք է ներկայացնի Վրաստանի քաղաքացու անձնագիր, որպեսզի ընտրական հանձնաժողովը ստուգի նրա կողմից Վրաստանի սահմանը հատելու փաստը և ամսաթիվը: Ինչի արդյունքում էլ ընտրական հանձնաժողովը պատճենում է քաղաքացու անձնագիրը և նրա տվյալները մտցնում է ընտրողների հատուկ ցուցակ:
- Եթե ընտրողը ընտրություններից առաջ, ոչ ուշ, քան 16-րդ օրը ազատագրվել է պատժիչ հաստատությունից և համապատասխանաբար չի կարողացել ընտրողների միասնական ցուցակում սեփական տվյալների ճշտությունը ստուգել: Այսպիսի դեպքում ընտրողը պետք է իր հետ ունենա պատժիչ հաստատության կողմից տրված տեղեկանք: Ընտրական հանձնաժողովը պատճենում է նշված տեղեկանքը և ընտրողի տվյալները մտցնում է ընտրողների հատուկ ցուցակ:
- Եթե ընտրողը ընտրություններից առաջ, ոչ ուշ, քան 16-րդ օրը դուրս է գրվել հիվանդանոցից և չի կարողացել ստուգել ընտրողների միասնական ցուցակում սեփական տվյալների ճշտությունը: Այսպիսի դեպքում, ընտրողը պետք է ներկայացնի համապատասխան բուժական հաստատության կողմից տրված տեղեկանք: Ընտրական հանձնաժողովը պատճենում է նշված տեղեկանքը և ընտրողի տվյալները մտցնում է ընտրողների հատուկ ցուցակ:

5. Ինչպիսի՞ գործողության պետք է դիմեմ, եթե գիտեմ, որ ընտրությունների օրը գրանցման վայրում չեմ լինելու:

Վրաստանում ընտրողների միասնական ցուցակը կազմվում է Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայականում նշված գրանցման հասցեի հիման վրա: Համապատասխանաբար, եթե ընտրությունների օրը չգտնվեք գրանցման վայրում, ձեզ համար կսահմանափակվի ընտրություններին մասնակցելու հնարավորությունը, բացառությամբ հետևյալ բացառիկ դեպքերի.

- Եթե ձեզ նշանակում են ընտրական հանձնաժողովի պաշտոնյա և ընտրական հանձնաժողովում աշխատանքի պատճառով, քվերակության օրը ձայն չեք կարողանա տալ ձեր ընտրական տեղամասում,
- Եթե դուք ընտրող եք, որը բուժման նպատակով պառկած է հիվանդանոցում և ուրիշ ստացիոնար բուժական հաստատությունում և ձեր առողջական վիճակից ելնելով, քվերակության օրը դուրս գրված չեք կարողանա լինել այդ հաստատությունից:
- Եթե դուք ընտրող եք, որը քվերակության օրը նախնական կալանավայրում է գտնվում:
- Եթե դուք Վրաստանի պաշտպանության և ներքին գործերի նախարարությունների ռազմական ուժերի ժամկետային և պայմանագրային ծառայության ռազմական ծառայող եք:
- Եթե դուք քվերակության օրը գտնվում եք նավարկության մեջ (տեղական ընտրություններից բացի):